

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԻ  
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Արայիկ Հարությունյանին

«**ՔԱՂԱՔԱՏԻ**»

Անահիտ Ասատրյանից

Երևան, Ազատության 12/3, բն. 1

Եղիշե Չարենցի տուն-թանգարան, 10017771

ԴԻՄՈՒՄ

Խնդրում եմ ինձ ընդգրկել «**Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարին**  
կից հասարակական խորհրդի կազմում:

Դիմող՝ Անահիտ Ասատրյան *Անահիտ*

«27». 11. 2019թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԻ  
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ  
MINISTERSTVO OBPASOVANIYA,  
NAUKI, KULTURY I SPORTA RA  
RA MINISTRY OF EDUCATION,  
SCIENCE, CULTURE AND SPORT  
Մայից N 40359-19  
«27» 11. 2019թ.

Հիմնավորում՝ հասարակական խորհրդում կազմակերպության ներգրավման աշխատանքների մասնակցության վերաբերյալ

Հակիրճ վերլուծություն՝ վերջին 3 տարիների ընթացքում նախարարության գործունեության և կրթության և գիտության կամ մշակույթի կամ սպորտի և երիտասարդության բնագավառներում իրականացվող քաղաքականության վերաբերյալ

Դեռևս տիկին Մակունցի պաշտոնավարման օրոք, ֆեյսբուքյան իմ էջում գրառում էի կատարել, որ պետք է ստեղծվի նախարարին կից խորհուրդ, որպեսզի նախարարի որոշումները հիմնավորված լինեն խորհրդի կողմից, անգամ եթե վերջնական որոշումը իրենն է:

Քանի որ այս նախարարության գործառույթների շրջանակը բավականին ընդգրկուն է, այդ պատճառով խորհրդի կազմը պետք է պատասխանատվություն վերցնի իր վրա՝ թեթևացնելու նախարարության աշխատանքները՝ հետևելու որոշումների կայացմանը տեղում: Խորհրդի որոշումները պետք է հիմնավորված լինեն օգտակարության, ծախսերի առումով: Խորհրդի կազմը պետք է ի վիճակի լինի ընդունելու տեղային, տարածաշրջանային և համահայկական որոշումները: Անկախ նրանից, թե խորհրդի կազմում կլինեն անհատներ, կազմակերպություններ, որոշումները պետք է ընդունվեն ի շահ ժողովրդի ընդհանրական շահերի և մշակույթի մակարդակի բարձրացման: Խորհուրդը պետք է որոշակի ժամանակ համագործակցի նեղ մասնագիտական կառույցների հետ, և եզրակացությունը պետք է այնքան համոզիչ լինի, որ մինիմալիզացվի չհիմնավորվածությունը:

Խորհրդի աշխատանքը պետք է միտված լինի ազատ և անկախ քաղաքացու ձևավորմանը, այն է, պետք է ընդունի որոշումներ, որոնք մատաղ սերնդին կհանեն հետընթաց կարծրացած մտածողությունից և ապահով ուղիներ կհարթեն նրանց հետագա մտածողության և կյանքի ընկալման համար:

Որպես թանգարան ՊՈԱԿ-ի տնօրեն՝ հաստատում եմ, որ արևմտամետոդային համակարգը իսկապես լուծեց թանգարանների դպրոցական այցելությունների հարցը՝ միաժամանակ թանգարաններին ապահովելով արտաբյուջեով: Մեկ որոշումով լուծվեցին բազմաթիվ ծառայած խնդիրներ՝ կապված դպրոցականների կրթության բարձրացման և թանգարանների հաճախելիության հետ: Գրքի փառատունը հրաշալի նախաձեռնություն է, բայց, ըստ իս, այն կարելի էր կազմակերպել նաև Արցախում, ինչու ոչ՝ նաև սահմանային գոտիներում՝ Տավուշ, Սյունիք և այլն: Գրական մրցույթներում ցանկալի է ներգրավել նոր անուններ:

Հետաքրքիր էր նաև երիտասարդ արվեստագետների դասախոսությունների շարքը ՀՀ տարբեր մարզերում:

Հայաստանում գիրք կարդալու մշակույթին ուղղված անգամ թեթև ժանրի ֆլեշմոբները կարող են դրական ազդեցություն ունենալ հասարակության տարբեր շերտերի վրա:

Հայագիտության հարցերի շուրջ չմարող արձագանքները խոսում են այն մասին, որ հարցը բաց էր մնացել և սայլը տեղից առաջ է շարժվում: Կարծում եմ, որ այս խնդիրը

պետք է փորձարկվի և հաստատվի միայն փորձի հիման վրա, անգամ եթե դա երկարաժամկետ է:

Նախարարությունում նորամուծությունները պետք է լինեն հաշվարկված միջին քաղաքացուց բարձր մակարդակի համար, որպեսզի քաշող ուժը չհպատակեցվի քաշվող ուժին:

Այսօր նոր երեխան կարող է և ունակ է կրթել հին ծնողին:

## Ամփոփ տեղեկանք՝ վերջին 2 տարում ծավալած գործունեության վերաբերյալ

2016 թվականից հանդիսանում եմ Եղիշե Չարենցի տուն-թանգարանի տնօրենը: Վերջին երկու տարում փոփոխել եմ թանգարանի աշխատանքային գործունեությունն ու կառուցվածքը: Նույն թվականի նոյեմբերին «Երևան» հյուրանոցի հետ համատեղ ջանքերով բացվեց Չարենցի սենյակը հյուրանոցում, որտեղ ապրել է 1928-1935 թվականներին:

Թանգարանը գուտ թանգարանային առօրյայից (էքսկուրսիաների ընդունում և կազմակերպում) բացի ապրեց նաև գիտական կյանքով, այժմ էլ շարունակվում են գիտական ու մշակութային՝ փոխազդեցական միջոցառումները: Այսինքն՝ մեկտեղել ենք գիտությունն ու մշակույթը՝ դուրս գալով թանգարանային նախկին «ավանդական դարձած» քարացած տրամաբանությունից: Կազմակերպել ենք բազմաթիվ գիտական զեկուցումների լսումներ, ամենամյա գիտաժողովներ («Չարենցը և իր ժամանակաշրջանը խորագրով): Լույս ենք ընծայել Չարենցի՝ արևելյան ժանրի ստեղծագործությունները մեկտեղող «Դեպի Արևելք» գիրքը, որը Չարենցի ստեղծագործական շրջանը ներկայացնող մատենաշարի առաջին հատորն է: Լույս ենք ընծայել ամենամյա գիտաժողովի նյութերի ժողովածուն: Գիտաժողովին հայտնի չարենցագետներից բացի մասնակցում են նաև սկսնակ հետազոտողներ, ուսանողներ: Թանգարանի աշխատակիցները մասնակցում են նաև այլ գիտական հաստատությունների կողմից կազմակերպած գիտաժողովներին:

Ձեռնարկել եմ «Կարմիր տան այսօրը» խորագրով ամենամյա գրական-մշակութային միջոցառում, որտեղ մեկտեղվել են մշակութային և գիտական շրջանակները: Ստեղծել ենք թանգարանի «Եղիշե Չարենց» մեդալը, որը նախատեսված է թանգարանի ամենամյա գործունեության ընթացքում ներգրավված ամենաակտիվ գիտնականների, լրագրողների, մշակութային գործիչների համար, որոնք նպաստում

են Չարենցի ստեղծագործությունների հանրահռչակմանը: Ծրագրել եմ Չարենցի ստեղծագործությունների անգլերեն թարգմանությունը:

Թարմացրել ենք թանգարանի երեսնամյա վաղեմություն ունեցող տոմսերի, բուկլետների, բեյջերի արտաքին ձևավորումը ավելի ժամանակակից լինելու նպատակով:

Թանգարանում կրթական ծրագրերի քանակն ավելացել է դպրոցական տարբեր տարիքային խմբերի համար: Ծրագրերը դուրս են եկել զուտ պատմողական մակարդակից և ձեռք են բերել խաղարկային և վիզուալ-առարկայական բնույթ:

Ժամանակ առ ժամանակ թանգարանը կազմակերպում է փոքր չափի գեղարվեստական գնրծերի ցուցադրություններ, որի ընթացքում հրավիրվում են Հայաստանի լավագույն նկարիչներն ու քանդակագործները: Թանգարանում մշտապես ելույթ են ունենում երիտասարդ տաղանդավոր կատարողները, որոնց համար դժվար է գտնել մեծ բեմեր կամ մեծ հարթակներ:

ԿԳՄՍ նախարարությանն ուղարկված Չարենցի ծննդյան 125-ամյակի կապակցությամբ մշակել ենք ժամանակակից գրողների գործերը ներկայացնող «Բանք չափաւ» մրցույթը, որը կկայանա ամբողջ տարվա ընթացքում, և վերջնարդյունքը ժյուրին կամփոփի ամեն տարվա վերջում: Ներկայացրել ենք նաև «Նավգիկե» պոեմի բալետային ծրագիրը, որը կարող է մտնել Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ակադեմիական թատրոնի խաղացանկում: Բազմաթիվ այլ ծրագրեր կան, օրինակ՝ Չարենցի տուն-թանգարանին կից պոեզիայի կենտրոնի ստեղծումը, որը նորից կնպաստի մշակութային դաշտի զարգացմանը և իր գործունեությամբ կրնգրկվի Արցախը, ՀՀ մարզերը: Ծրագիրը հետագայում ձեռք կբերի տարածաշրջանային նշանակություն: Դա իր նպաստն է բերելու մշակութային և գիտական կյանքի աշխուժացմանը հատկապես մարզերում:

Հնարավորինս ապահովում եմ թանգարանի աշխատակիցների ակտիվ հանգիստը՝ մարզեր այցելություններով, էքսկուրսիաներով: Կազմակերպել ենք չարենցյան ընթերցումներ թանգարանից դուրս: Ունեցել ենք նաև բարեգործական համերգ, որի շնորհիվ վերականգնել ենք ոռոյալը, Չարենցի աշխատասենյակի երկու պահարանը, ննջարանի զգեստապահարանը, անձնական աշխատասեղանը, որոնք չէին վերականգնվել շուրջ երեսուն տարի:

ՀԱՅԱՍՏԱՆ

03 Ա 059150

կապիտալական անձի պետական գրանցման

Ե. ԶԱՐԵՆՑԻ ՏՈՒՆ - ՔԱՆԳԱՐԱՆ

(անվանումը)

ՊԵՏԱԿԱՆ #2 ԱՐԻՎՏԲԱՏԻՆ ԿԱՍԱՆՆԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Գրանցված է պետական ռեգիստրի կողմից  
ՆՆՏՏՈՍ Տ/Բ  
տիրության ժամանակն անվանումը

Գրանցման կաճաղը 286.210.04832


Գրանցման տարին, ամիսը և օրը 03.02.2008թ.

Իրավաբանական անձի ծածկագիրը (կոդը) 10017771

Իրավաբանական անձի տեսակը ՀՈՂ ԿՈՒՆՏՐԱԿՏ

Գործառնաբարան ժամկետը ՎՈՒՄ ԿԵՆ

Վկայվածն ուժի մեջ է մտան մերիկյի հետ



ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

*(Signature)*  
Սարգիսյան

03 Փետրվարի 2008 թ.

Ներքի 004

Իրավաբանական անձի պետական գրանցման  
N 0361059150 կապիտալ

Իրավաբանական անձի անվանումը Ե. ԶԱՐԵՆՑԻ ՏՈՒՆ -  
ՔԱՆԳԱՐԱՆ (այժմ)


Ցանկում գտնվող

Իրավաբանական անձի գրանցումը կատարել է ՏՈՒՆԻՆ  
ԱՆՆԱՏՆ ԱՍՏԻՅԱՆ ՕՔՐԻՂ

անվանումը ԱՄՈՎՏՏՏՏՏ, ամիսը 2011-10-09, 2007 թվականի  
հունիսի 12-ին հայտարարվել է ՔԱՆԳԱՐԱՆ  
ՏՆՏՐՈՒՆ 0037 ԵՐԵՎԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Իրավաբանական անձի իրավունակությունից անձնանկար  
կրթացման հարցերը

Այլ տեղեկություններ ստանալու համար ընդհանուր ինֆորմացիոն  
կայքից կարելի է հարցնել  
Փոփոխությունները գրանցվել են 2011-06-23-ին



ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

*(Signature)*  
Սարգիսյան

03 06 2011

Ներդրում ուժի մեջ է մտան մերիկյան հետ